ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

1 օգոստոսի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

106
(2956)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՂԵԼ ԵՆ ԲԱՐՁԻԹՈՂԻ ՎԻՃԱԿՈՒՄ

Ադրբեջանի կողմից ռազմական նոր գործողությունների սպառնալիքի տակ գտնվող Հայաստանը, փաստացի, այս պահին բարձիթողի վիճակում է:

Բարձրագույն իշխանության բոլոր ներկայացուցիչները որոշել են միաժամանակ արձակուրդի գնալ՝ երկիրը թողնելով բախտի քմահաճույքին:

«Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական աղբյուրներից պարզեց, թե բարձրաստիճան որ պաշտոնյան երբ է արձակուրդի մեկնել:

Այսպիսով, թեեւ Նիկոլ Փաշինյանը ակտիվորեն մարզեր է այցելում, տարբեր հանդիպումներ ունենում, մասնակցում ՔՊ տարածքային կազմակերպության խորհրդի ընտրություններին, բայց, փաստացի, նա հուլիսի 15-ից օգոստոսի 12-ը արձակուրդում է: Թերեւս աննախադեպ երեւույթ է, որ երկրի ղեկավարը, այն էլ՝ բազմաթիվ սպառնալիքների առջեւ գտնվող երկրի, շուրջ մեկ ամիս արձակուրդ վայելի:

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, ով կառավարման խորհրդարանական համակարգ ունեցող Հայաստանում վարչապետից հետո երկրորդ քաղաքական դեմքն է, հուլիսի 16-ից օգոստոսի 5-ը արձակուրդում է:

Արտգործնախարար Արարատ Միրզոյանը, ով հուլիսի 22-ից մինչեւ հուլիսի 26-ը ներառյալ արձակուրդում էր եղել, երկրորդ անգամ է հանգստի գնացել՝ երկարացնելով արձակուրդային ժամանակը՝ հուլիսի 31-ից օգոստոսի 2-ը ներառյալ:

Աշխատանքից հանգստանում է նաեւ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը:

Ստացվում է՝ մի կողմից Նիկոլ Փաշինյանն ու իշխանության ներկայացուցիչները պարբերաբար ժողովրդին նոր պատերազմի վտանգով են ահաբեկում, մյուս կողմից էլ հանգիստ սրտով, միաժամանակ արձակուրդի են գնում՝ երկիրը թողնելով առանց քաղաքական ղեկավարության:

Թերեւս, եթե սա լիներ Շվեյցարիայի, Նորվեգիայի կամ խաղաղ կարգավիճակում գտնվող մի այլ երկրում, գուցե հասկանալի եւ ընդունելի լիներ, բայց նոր պատերազմի սպառնալիքի տակ գտնվող Հայաստանի դեպքում երկրի բարձրագույն ղեկավարության այս քայլը չունի որեւէ բացատրություն:

Ի դեպ, ՀՀ նախագահն էլ օլիմպիական խաղերին հետեւելու համար Փարիզ էր մեկնել:

2024 թվականը տհաճ անակնկալով սկսած, Քաղաքաշինության կոմիտեի նախկին ղեկավար Արմեն Ղուլարյանը հայտնվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի թիրախում: «Ժողովուրդ» օրաթերթը դեռ դեկտեմբերի 19-ին անդրադարձել էր Արմեն Ղուլարյանի հայտարարագրին եւ կատարել էր համալիր վերլուծություն՝ հստակ ընդգծելով Ղուլարյանի ֆինանսական միջոցներում առկա հնարավոր կոռուպցիոն ռիսկը: Այդ հրապարակումից գրեթե 2 շաբաթ անց Ղուլարյանը սկանդալային կերպով ազատվեց աշխատանքից՝ Նիկոլ Փաշինյանի հրամանով: Հիշեցնենք, որ Արմավիրի եւ Լոռու մարզերի նորակառույց դպրոցներ այցի ժամանակ Փաշինյանն արձանագրել էր, որ դպրոցների կառուցումն արվել էր անորակ կերպով ու միաժամանակ՝ կասկածելի: Օրինակ՝ 2000 դրամ արժեցող ցնցուղը գնվել էր 75 հազար դրամով: Այս չարաշահման համար, կարծես, ոչ ոք չպատժվեց՝ բացի Ղուլարյանից: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն իրականացրել է Արմեն Ղուլարյանի եւ նրա ընտանիքի անդամների՝ 2021 եւ 2022 թվականների տարեկան հայտարարագրերի վերլուծություն: Արդյունքները քննարկվել են Հանձնաժողովի նիստում, որոշում է կայացվել առերեւույթ անհամապատասխանությունների վերաբերյալ պարզաբանում հայցելու Արմեն Ղուլարյանից եւ նրա ընտանիքի անդամներից. սակայն դեռեւս չկան պաշտոնական տվյալներ, թե ինչ պարզաբանում է ներկայացրել Ղուլարյանը ԿԿ հանձնաժողովին:

Իրավապահ մարմինները մտադրություն ունեն կարճելու Փոքր Վեդու մանկապարտեզի միջադեպով գործը, սակայն դեռեւս վերջնական որոշում չկա: Տեղեկությունը փորձեցինք պարզել Քննչական կոմիտեից, որտեղից ի պատասխան՝ հայտնեցին, որ այս փուլում նախաքննությունը բնականոն հունով շարունակվում է: Հիշեցնենք, որ հուլիսի 26-ին համացանցում հրապարակվել էր տեսանյութ, որտեղ երեւում է, թե ինչպես է մանկապարտեզի աշխատակիցը ֆիզիկական բռնություն գործադրում՝ ծեծում երեխային: Քննչական կոմիտեից հայտնել էին, որ դաստիարակին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 196-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, այն է՝ անչափահասին ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան տառապանք պատճառելը: Ի դեպ, երեխայի ծնողները բողոք չեն ներկայացրել դաստիարակի դեմ: Իսկ, ահա, Փոքր Վեդու «Զարթոնք» մանկապարտեզի դաստիարակը՝ Հերմինե Սարգսյանը, որն ավագ խմբի սան Ա. Կ.-ին ծեծել էր քնի ժամին, զղջացել է արարքի համար ու պատրաստ է ներողություն խնդրելու թե՛ երեխայից, թե՛ նրա ծնողներից: Այս մասին հայտնել էր Հերմինե Սարգսյանի պաշտպան Արթուր Նահապետյանը՝ նշելով. «Նա զղջում է կատարվածի համար, դիրքորոշում է արտահայտել, որ պատրաստ է ներողություն խնդրել թե՛ երեխայից, թե՛ նրա ծնողներից»: Ինչով կավարտվի այս ցավալի դեպքը՝ կիմանանք հետեւելով քննության ընթացքին:



«Ժողովուրդ» օրաթերթի լավատեղյակ աղբյուրները փոխանցում են, որ որքան էլ իշխանությունը փորձում է ցույց տալ, թե որեւէ կերպ չի «վախենում» ընդդիմության պայքարից, փողոց դուրս եկող ժողովրդից, միեւնույնն է՝ իրենց ներսում շատ մտահոգ են: Ըստ մեր աղբյուրների՝ տեւական ժամանակ է՝ ՔՊ-ն քննարկում է այն հարցը, թե ինչ կարելի է սպասել սեպտեմբերին, քանի որ, մեր տեղեկությունների համաձայն, Բագրատ սրբազանն ասել է, որ սեպտեմբերի 10-ից սկսած՝ թեժ աշուն է սպասվում: Մեր տեղեկություններ համաձայն՝ ՔՊ-ականները քննարկել են, թե ինչ է պետք սպասել խոստացված «թեժ աշնանից», քանի որ նույն ժամանակահատվածում սկսվում են Ազգային ժողովի աշխատանքները: Հիմա քայլեր, միջոցներ են ձեռնարկում ամեն բան այնպես կազմակերպելու, որ իրենց աշխատանքը աշնանը չխաթարվի, քանի որ Բագրատ սրբազանին հաջողվում էր փողոցներ փակել, այդ թվում՝ նաեւ Ազգային ժողովի մուտքերը, չնայած այն բանին, որ ոստիկանությունը փորձում էր ապահովել բնականոն աշխատանքը: Իշխանությունն այդ մտավախությունն ունի եւ ձեռնարկում է քայլեր՝ վատ իրավիճակում չհայտնվելու համար: Հունիսի 12-ին Ազգային ժողովի մոտ այն իրավիճակն էր ստեղծվել, որ լուսաձայնային նռնակներ կիրառեցին՝ հավաքված անձանց ցրելու համար:

ԶՐՈՒՅՑ

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Ստեփան Դանիելյանի հետ՝ քննարկել հայ-թուրքական հարաբերությունները:



-Պարոն Դանիելյան, օրերս՝ տարի ընդմիջումից հետո, հայ-ադրբեջանական սահմանին տեղի ունեցավ Հայաստանի եւ Թուրքիայի ներկայացուցիչների՝ Ռուբեն Ռուբինյանի եւ Սերդար Քըլըչի հանդիպումը: Կողմերը արդյունավետ են գնահատել հանդիպումը, Հայաստանի ԱԳՆ-ն հայտնել է, որ Երեւանն ու Անկարան պայմանավորվել են գնահատել տեխնիկական կարիքները՝ Ախուրիկ-Աքյակա երկաթուղային սահմանային անցումը գործարկելու համար, ինչպես նաեւ փոխադարձաբար հեշտացնել վիզայի ընթացակարգերը դիվանագիտական/պաշտոնական անձնագրեր ունեցողների համար: Ամփոփելով հանդիպման մասին կողմերի արձագանքները՝ ինչպե՞ս կգնահատեք Ռուբինյան-Քըլըչ հանդիպումը, ի՞նչ տվեց այն:

-Առաջինը, ինչ կարող եմ ասել, այն է, որ Ադրբեջանը խոչընդոտում է, որ հայ-թուրքական հարաբերություններ հաստատվեն, ամեն դեպքում՝ Ադրբեջանից եւ Թուրքիայից հնչող հայտարարությունների մեջ կան հակասություններ: Թուրքիայում ասում են, որ շուտափույթ խաղաղության պայմանագիր պետք է կնքվի, իսկ Ադրբեջանը դրա համար լրացուցիչ պայմաններ է դնում Հայաստանի առաջ, որոնց կատարման համար երկար ժամանակ է պետք, ըստ էության՝ Ադրբեջանում չեն ուզում, որ խաղաղության պայմանագիրը կնքվի հիմա, սա ի ցույց է դնում Թուրքիայի եւ Ադրբեջանի միջեւ եղած հակասությունները:

-Այստեղ մի ուշագրավ դրվագ էլ կա, որ հանդիպումից ընդամենը օրեր առաջ Էրդողանը ինքնախոստովանական հայտարարությամբ է հանդես գալիս, որ Թուրքիայի բանակը ակտիվ մասնակցություն է ունեցել արցախյան 44-օրյա պատերազմին:

-Էրդողանն այդ հայտարարությունն արել է կուսակցական փակ հավաքի ժամանակ, այսինքն՝ դա հրապարակային չի եղել, այդ փակ հավաքից հայտարարությունը դուրս է եկել. սա շատ կարեւոր պահ է: Նրա հայտարարությունն ուղղված է եղել Իսրայելի դեմ, թե, նայեք՝ ինչպես Լիբիայում եւ Ղարաբաղում մեզ պահեցինք, նույն ձեւով էլ կարող ենք Իսրայելում դրսեւորել:

Ես Էրդողանի հայտարարությունը չէի կապի հայ-թուրքական սահմանին տեղի ունեցած հանդիպման հետ:

-Պարոն Դանիելյան, այսօր ամերիկյան կողմից մի ուշագրավ հայտարարություն է հնչել: ԱՄՆ պետքարտուղարի՝ Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով օգնական Ջեյմս Օ՛ Բրայենը հայտարարել է, որ ԱՄՆ-ն դիտարկում է ՌԴ-ն եւ Չինաստանը շրջանցող առեւտրային երթուղի ստեղծել՝ Հայաստանով եւ Ադրբեջանով: Ի՞նչ կասեք այս մասին:

-Այդ հայտարարություններին արդեն կարելի է չհետեւել, քանի որ երկար ժամանակ նման հայտարարություններ արվել են, բայց դրանք ոչինչ չեն փոխում: Նպատակն ակնհայտ է՝ այս ամենն ուղղված է Իրանի ու Ռուսաստանի դեմ, դրա համար օգտագործում են Հայաստանը: Այստեղ ինչն է հետաքրքիր, որ առաջին շահառուն պետք է լիներ Ադրբեջանը, բայց խոչընդոտում է դրան:

-Ինչո՞ւ է խոչընդոտում:

-Երկու պատճառով, առաջին, որ, երեւի պայմանավորվածություններ ունի Ռուսաստանի հետ, ինչպես նաեւ մտահոգություններ կան, ու չի ցանկանում նման քայլերով կոնֆլիկտներ ստեղծել Ռուսաստանի հետ: Մյուս կողմից մտահոգություններ ունի նաեւ Իրանի հետ կապված, քանի որ Իրանը դեմ է այդ ճանապարհի բացմանը: Այս առումով Ադրբեջանն ունի փակ պարտավորություններ եւ պարտավորություններ այդ երկու երկրներ հետ:

-Իսկ ըստ Ձեզ՝ ի՞նչ նկատի ունի ԱՄՆ-ն՝նոր երթուղի ասելով, ի՞նչ ճանապարհ է այն լինելու ու ի՞նչ է «տալու կամ վերցնելու» Հայաստանից:

-Իմաստը հետեւյալն է՝ կա ճանապարհ նաեւ Վրաստանով, բայց Վրաստանն ինքնիրույն քաղաքականություն է վարում եւ այդ ճանապարհը տնտեսական նշանակություն ունի, իսկ Հայաստանով ճանապարհը ունի ռազմական նշանակություն եւ դրանով արեւմտյան ու թուրքական զենք ու զինամթերք է գնալու դեպի Ադրբեջան

-Այսինքն՝ Հայաստանը կարող է դառնալ նոր պլացդա՞րմ:

-Այո, թուրքական աշխարհի համար, հովանավորն Արեւմուտքն է լինելու, իսկ նպատակը Ռուսաստանի, Իրանի եւ Չինաստանի դեմ է ուղղված. սա է ամբողջ հարցը:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՄՈՍԿՎԱՆ ԿՈՉ Է ԱՐԵԼ

ՌԱԶՄԱԿԱՆ ՀՌԵՏՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԽԱՆԳԱՐՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Ռուսաստանի Դաշնությունը կոչ է անում Բաքվին եւ Երեւանին էսկալացիայից խուսափելու համար ցուցաբերել զգուշություն, խուսափել ռազմական հռետորաբանությունից, կենտրոնացնել ջանքերը՝ գտնելու փոխընդունելի լուծումներ, որոնք կնպաստեն տարածաշրջանում կայուն խաղաղության հաստատմանն ու զարգացմանը:

Այս մասին՝ հուլիսի 31-ին կայացած մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել է ՌԴ ԱԳՆ տեղեկատվության եւ մամուլի դեպարտամենտի փոխտնօրեն Անդրեյ Նաստասինը՝ ընդգծելով, որ ՌԴ-ն հանդես է գալիս Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ բոլոր վիճահարույց հարցերի շտկման տեսանկյունից՝ բացառապես քաղաքական-դիվանագիտական ճանապարհով:

Պաշտոնյան նշել է նաեւ, որ դրան հասնելու համար ճանապարհային քարտեզ է համարվում եռակողմ ձեւաչափի վերագործարկումը՝ Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների մասնակցությամբ:

Անդրադառնալով հայերի՝ Լեռնային Ղարաբաղ վերադարձին վերաբերող հարցին՝ռուս պաշտոնյան նշել է՝ քանի որ հայ-ադրբեջանական հակամարտությունը կրում է ձգձգված բնույթ, երկարամյա դիմադրության արդյունքում երկու կողմերից էլ հազարավոր փախստականներ ու տեղահանվածներ կան:

«Ռուսաստանը հետեւողականորեն հանդես է գալիս երկու երկրների միջեւ ամուր խաղաղության հաստատման համար: Եռակողմ պայմանավորվածությունները հենց այդ միտումն ունեն՝նախատեսում են փուլային լուծում առավել բարդ խնդիրների, այդ թվում՝ սոցիալ-հումանիտար ուղղվածության, երկխոսության գործարկում քաղաքացիական հասարակությունների միջեւ: Խոսքը միայն փախստականների մասին չէ, այլեւ հուշակոթողների ավերումը թույլ չտալու»,- ասել է Նաստասինը:

«ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՐԵՍ ԴԱՐՁՐԵՑ ՀՀ-ԻՑ». Օ՛ ԲՐԱՅԵՆ

2020-ի պատերազմից երկար տարիներ առաջ եւ դրանից հետո ՌԴ-ն ՀՀ-ի անվտանգության երաշխավորն էր, սակայն նա ձախողեց, թիկունք դարձրեց, երբ Ադրբեջանը վերագրավեց Լեռնային Ղարաբաղի շուրջ տարածքները: Այս մասին ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի Եվրոպայի եւ տարածաշրջանային անվտանգության համագործակցության ենթահանձնաժողովի նիստում ասել է ԱՄՆ պետքարտուղարի օգնական Ջեյմս Օ՛ Բրայենը:

«Դա հանգեցրեց հարաբերությունների խիստ խզման, Հայաստանի բնակչության մեծ մասը ցանկանում է ավելի հեռվանալ ՌԴ-ից: Իսկ մենք պայմաններ ենք ստեղծում, որ դա տեղի ունենա»,- ասել պետքարտուղարի օգնականը:

Նա ընդգծել է, որ ԱՄՆ-ն ցանկանում է Հայաստանի համար հնարավոր դարձնել խիզախ քայլերի դիմելը, դեպի որոնց առաջնորդում է վարչապետ Նիկոլ Փաշինյանը. խոսքը ՌԴ-ի հետ հարաբերությունների խզման մասին է:

«Հայաստանն այն թեման է, որին ԱՄՆ-ն շատ ժամանակ է տրամադրում: Մի քանի ամիս առաջ հանդիպել ենք վարչապետ Փաշինյանի հետ եւ հաստատել ՌԴ-ից ՀՀ-ից կախումը նվազեցնելու նոր հարթակ: Հայաստանը գրեթե ամբողջովին՝ տնտեսապես եւ էներգետիկայի առումով կախված է ՌԴ-ից: Մենք պետք է դիվերսիֆիկացնենք դա»,- ասել պետքարտուղարի օգնականը:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

«Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Էրդողանի՝ Արցախ ներխուժելու հետ կապված թեման ակտիվ դիսկուրսի առիթ դարձավ, եւս մի քանի դիտարկում»: Այս մասին իր ֆեյսբուքյան էջում գրել է ընդդիմադիր պատգամավոր Տիգրան Աբրահամյանը:

«Թուրքիան ոչ միայն ուղիղ ներգրավվածություն ուներ 44-օրյա պատերազմին, այլ հետագայում ռազմական ներկայություն ապահովեց Արցախի օկուպացված շրջաններում:

Արտաքուստ Թուրքիայի առկայությունը ներկայացվում էր Աղդամում տեղակայված ռուս-թուրքական մոնիթորինգային կենտրոնով, սակայն դա թուրքական զորքերի ներկայության ֆորմալ հատվածն էր:

2020 թվականի պատերազմից հետո Թուրքիան «Կոմանդո» ջոկատներ էր տեղակայել Շուշիի եւ Քաշաթաղի հատվածներում, որոնք, այսպես կոչված, արագ արձագանքման գործառույթներ ունեին:

Թուրքական ջոկատներն ակտիվ մասնակցություն են ունեցել նաեւ 2023 թվականի սեպտեմբերյան հարձակման ժամանակ... », - գրել է նա:

ՀԱՐԻՍԸ ԿՆԵՐԿԱՅԱՑՆԻ ԻՐ ԹԵԿՆԱԾՈՒԻՆ

ԱՄՆ փոխնախագահ Քամալա Հարիսը մտադիր է օգոստոսի 6-ին Փենսիլվանիա նահանգի Ֆիլադելֆիա քաղաքում հանրահավաքի ժամանակ ներկայացնել նախընտրական պայքարի իր թեկնածուին:

Նրանց տվյալներով՝ վայրի ընտրությունը վկայում է, որ Հարիսի թեկնածուն, որը առաջիկա ընտրություններում կառաջադրվի փոխնախագահի պաշտոնում, ամենայն հավանականությամբ Փենսիլվանիայի նահանգապետ Ջոշ Շապիրոն է:

Նոյեմբերի 5-ին անցկացվելիք ԱՄՆ նախագահական ընտրություններում «Հանրապետական» կուսակցությունն ընտրություններում կներկայացնի ԱՄՆ նախկին առաջնորդ Դոնալդ Թրամփը, իսկ փոխնախագահի նրա թեկնածուն Ջեյմս Դեյվիդ Վենսն է:

Ակնկալվում է, որ Հարիսը շուտով կհաստատվի որպես «Դեմոկրատական» կուսակցության նախագահի թեկնածու: Պաշտոնապես «Դեմոկրատական» կուսակցությունն այս հարցի շուրջ քվեարկելու է օգոստոսի 1-5-ը առցանց ձեւաչափով:

ՄԵՂՍԱԿԻՑ Է ՀԱՄԱՐՈՒՄ

Իրանի արտաքին գործերի նախարարությունը Թեհրանում պաղեստինյան ՀԱՄԱՍ շարժման քաղբյուրոյի ղեկավար Իսմայիլ Հանիեի սպանությանը մեղսակից է անվանել ԱՄՆ-ին:

«ԱԳՆ-ն ընդգծում է ԱՄՆ կառավարության պատասխանատվությունը՝ որպես մեղսակից այս զազրելի ահաբեկչական գործողության իրականացմանը եւ սիոնիստական ռեժիմի (Իսրայելի) կողմից պաղեստինցիների բռնազավթման եւ ցեղասպանության շարունակությունը:

Այս ահաբեկչությունը ոչ միայն միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի, ինչպես նաեւ ՄԱԿ-ի կանոնադրության կոպիտ խախտում է, այլեւ լուրջ վտանգ է միջազգային խաղաղության եւ տարածաշրջանային անվտանգության համար», - ասվում է Իրանի ԱԳՆ-ի հայտարարության մեջ:

ՄՏԱԴԻՐ ՉԷ ՀԵՏԱՄՈՒՏ ԼԻՆԵԼ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆԸ

Թուրքիան դատապարտել է պաղեստինյան արմատական ՀԱՄԱՍ շարժման քաղաքական բյուրոյի ղեկավար Իսմայիլ Հանիեի սպանությունը Թեհրանում: Այս մասին ասվում է Թուրքիայի ԱԳՆ հայտարարության մեջ:

«Մենք դատապարտում ենք Թեհրանում ՀԱՄԱՍ-ի քաղբյուրոյի ղեկավար Իսմայիլ Հանիեի սպանությունը:

Եվս մեկ անգամ պարզ դարձավ, որ Նեթանյահուի կառավարությունը մտադիր չէ հետամուտ լինել խաղաղությանը: Այս հարձակումը նպատակ ունի նաեւ տարածել պատերազմը Գազայից դուրս՝ ամբողջ տարածաշրջանում: Եթե միջազգային հանրությունը չփորձի Իսրայելին կանգնեցնել, մեր տարածաշրջանը կբախվի շատ ավելի լուրջ հակամարտությունների»,- ասված է հայտարարության մեջ:

ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿ

ԻՐԱՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻՆ

Հայաստանում փետրվարի 1-ից մեկնարկել է «Արցախից բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության մեխանիզմների հզորացում» ծրագիրը, հուլիսի 26-ին էլ տեղի ունեցավ Արցախից տեղահանվածներին իրավական եւ իրավաբանական օգնության հարթակի շնորհանդեսը:

ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Արցախից բռնի տեղահանված անձանց՝ Հայաստանում ինտեգրմանը նպաստելու գործում կարևորվում է կառավարության/տեղական ինքնակառավարման մարմինների և հանրության միջև համագործակցությունը և աջակցությունը, որը, ի թիվս այլնի, կարող է դրսևորվել վերջիններիս իրավունքների պաշտպանության մեխանիզմների ուժեղացմամբ: Այս առումով, մենք պատրաստակամ ենք ստանալ Արցախից բռնի տեղահանված անձանց իրավական խնդիրներին առնչվող Ձեր հայտերը և աջակցել Ձեզ և Հայաստանի Հանրապետության կառավարությանը և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ դրանց լուծման հարցում:

Ծրագիրը իրականացվում է Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից «Հարմոնիա» շուշեցի կանանց հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ՝ Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների մշտադիտարկում» (www.juremonia.am) ծրագրի շրջանակներում:

Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ Կարեն Զադոյանը նշեց, որ մեծ ջանքեր են ներդրվել ծրագիրն իրականացնելու համար: Նպատակն է նպաստել Արցախից բռնի տեղահանվածների ադապտացմանը Հայաստանում, իրենց բնակության նոր համայնքներում նրանց իրավունքների պաշտպանության մեխանիզմների ուժեղացման միջոցով բարձրացնել նրանց իրավունքների իրավական իրազեկության եւ արդարադատության հասանելիության մակարդակն ու պաշտպանությունը:

«Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների իրավունքների պաշտպանության մեխանիզմների ուժեղացում» ծրագրի իրավաբան Մարիանա Ավագյանը, որը նույնպես Արցախից բռնի տեղահանված է, նշեց, որ իրավաբանական աջակցությունն ավելի հասանելի դարձնելու նպատակով ՏԻՄ-երի միջոցով հանդիպումներ են կազմակերպվել հենց այն համայնքներում, որտեղ բնակվում են տեղահանված քաղաքացիները:

«113 արցախցու անվճար իրավաբանական օգնություն է ցուցաբերվել տեղում՝ Հայաստանի 12 համայնքներում մեր այցելությունների ժամանակ, 10 քաղաքացի ինքնուրույն է դիմել մեր գրասենյակ, եւս 28-ը՝ հեռավար (հեռախոսով կամ առցանց): Իրազեկման սեմինար ենք անցկացրել, որի նպատակը Արցախից բռնի տեղահանված անձանց իրավագիտակցության մակարդակի բարձրացումն է եղել: Ներկայացվել են այն աջակցության ծրագրերը, ինչպես նաեւ օրենսդրական կարգավորումները, որոնց վերաբերյալ հաճախ հարցեր են առաջանում»,-նշեց Մարիանա Ավագյանը:

Այնուհետեւ Արցախից բռնի տեղահանվածների իրավունքների պաշտպանության ՔՀԿ-ների ցանցի կառավարման խորհրդի նախագահ, «Հարմոնիա» ՀԿ գործադիր տնօրեն, բռնի տեղահանված Ջուլիետտա Առուստամյանը ներկայացրեց Արցախահայերի իրավունքների պաշտպանության ՔՀԿ-ների ցանցը, որը ստեղծվել է 2024 թվականի փետրվարին: Ցանցի հիմնական նպատակն է համախմբել արցախահայերի իարվունքներով զբաղվող ներուժը՝ Արցախից բռնի տեղահանված անձանց իրավունքները պաշտպանելու համար:

Վերջում Կարեն Զադոյանը ներկայացրեց armrights.am-ը: Էլեկտրոնային հարթակի անվանումն ընտրվել է ցանցի անդամների կողմից կայացած քվեարկության արդյունքում:

Էլեկտրոնային հարթակի միջոցով արցախահայերը հնարավորություն են ունենալու առցանց բարձրացնելու եւ լուծելու իրենց իրավական խնդիրները:

Հարթակի միջոցով քաղաքացիները կարող են նաեւ ֆինանսապես աջակցել արցախահայերի իրավական խնդիրների լուծմանը:

«Սա փորձնական հարթակ է, որն անընդհատ լավարկելու ենք: Հարթակում տեղադրվել են նաեւ արցախահայերի հաջողության պատմությունները՝ցույց տալու համար, որ եթե մեկ անձի իրավական խնդիրները լուծվում են, ապա հաամման խնդիրներ ունեցող մեկ այլ անձ դա կարող է տեսնել եւ դիմել, որպեսզի իր խնդիրները նույնպես լուծվեն: Լուծված խնդիրը կարող է փոքր թվալ, սակայն այդ անձի, ընտանիքի համար այն լուրջ հաջողություն է»,-նշեց Կարեն Զադոյանը:

Հիշեցնենք, որ Հայաստանում գրանցված է Արցախից տեղահանված 101 848 անձ, որոնցից 30 հազարը երեխաներ են: Մարզերում բնակվում է 72 626 տեղահանված անձ, մյուսները՝Երեւանում:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թուրքիայի ԱԳՆ-ն հայտարարություն է տարածել այսօր հայ-թուրքական սահմանին տեղի ունեցած Հայաստանի եւ Թուրքիայի հատուկ ներկայացուցիչներ Ռուբեն Ռուբինյանի ու Սերդար Քըլըչի հանդիպման վերաբերյալ:

Նշվում է, որ հուլիսի 30-ին Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունների կարգավորման գործընթացի հատուկ ներկայացուցիչներ, դեսպան Սերդար Քըլըչը եւ Հայաստանի Ազգային ժողովի փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանը հինգերորդ հանդիպումն են ունեցել երկու երկրների սահմանին գտնվող Ալիջան-Մարգարա անցակետում:

Ըստ թուրքական կողմի հաղորդագրության՝ կողմերը վերահաստատել են նախորդ հանդիպումներում ձեռք բերված պայմանավորվածությունները:

«Նրանք պայմանավորվել են նաեւ գնահատել տեխնիկական պահանջները, որոնք թույլ կտան կազմակերպել Աքյաքա/Ախուրիկ երկաթուղային սահմանային անցակետի գործարկումը տարածաշրջանային զարգացումներին համահունչ, ինչպես նաեւ պարզեցնել դիվանագիտական/պաշտոնական անձնագիր ունեցողների համար փոխադարձ վիզայի ընթացակարգերը»,-ասվում է հայտարարության մեջ: Բացի այդ, կողմերը կրկին ընդգծել են իրենց հանձնառությունը՝ շարունակելու կարգավորման գործընթացն առանց որեւէ նախապայմանի՝երկու երկրների միջեւ լիարժեք կարգավորման վերջնական նպատակին հասնելու համար:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց տնտեսագետ Թադեւոս Ավետիսյանի հետ՝ հասկանալու՝ տնտեսական ինչ փոփոխությունների առջեւ է կանգնելու Հայաստանը սահմանային անցակետի գործարկման դեպքում: Վերջինս ասաց՝ վստահ չէ, որ երկաթուղին կգործարկվի եւ հնարարվոր է, որ սա հերթական մանիպուլիացիան է:

«Դժվար է ասել, որովհետեւ նախ պիտի ամբողջական վերլուծություն արվի, թե ինչքանով է սա ձեռնտու մեր տնտեսությանը: Այսինքն՝ այդ հաշվարկները կառավարությունը պիտի ներկայացնի: Լայն իմաստով՝ այստեղ ակնհայտ է, որ ապաշրջափակումը տարածաշրջանային զարգացման կարեւոր նախապայման է, դա ապաշրջափակում է, որը կարող է ունենալ ենթադրյալ տնտեսական օգուտներ: Պետք է հասկանալ, թե ինչի գնով է, որովհետեւ այս իշխանություններն ինչքան խոսում են առանց նախապայմանների տնտեսական փոխգործության մասին, մենք էլ ավելի շատ պայմանների ու պարտադրանքների ենք ականատես լինում»:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԵՐԿԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարը Հայաստանի եւ Թուրքիայի հատուկ ներկայացուցիչների հանդիպումը կարեւոր է համարել: Դրա մասին նա գրել է X սոցիալական ցանցի իր միկրոբլոգում:

«Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունների կարգավորումն ու վերականգնումը կարեւոր տարրեր են ավելի կայուն եւ բարգավաճ Հարավային Կովկասի համար», - նշել է Կլաարը:

Հիշեցնենք, որ հանդիպումը տեղի է ունեցել հուլիսի 30-ին Մարգարա-Ալիջան սահմանային հատվածում: Հայաստանի ԱԳՆ-ն հայտնել է, որ Երեւանն ու Անկարան քննարկել են Ախուրիկ-Աքյակա երկաթուղային սահմանային անցակետի վերականգնման հնարավորությունը:

ԳՈՐԾԸ ՔՆՆՎՈՒՄ Է

ԱՐՄԻՆԵ ՃԱՂԱՐՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Վարդուհի Անանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով «Վիզիթ Լոռի» ՍՊԸ-ի տնօրեն եւ հրահանգավորումների անցկացման պատասխանատու անձ, Դեբեդ գետի վարարման ընթացքում գետի վրա կազմակերպել է ռաֆտինգի ծառայություն, որպես թիմի անդամներ ներգրավել է սիրողական անձնակազմի, սահմանված կարգով չի նշանակել պատասխանատու անձ, ուսուցում եւ հրահանգավորումներ չի անցկացրել, ինչի հետեւանքով 2022 թվականի մայիսի 9-ին՝ ժամը 15:30-ի սահմաններում, Դեբեդ գետի Քոբայր-Սանահին կայարան հասվածի 3-րդ կիլոմետրում ռաֆտինգելու ընթացքում քարին հարվածելու հետեւանքով Արմինե Ճաղարյանն ընկել է գետը եւ ջրահեղձման արդյունքում՝ մահացել: Գործը դատարանում է, ընթանում է քննություն:

2023 թվականի նոյեմբերի 23-ին ՔԿ-ն հայտնել էր, որ ՀՀ Լոռու մարզի Դեբեդ գետում հեռուստալրագրող Արմինե Ճաղարյանի մահվան դեպքի առթիվ քրեական հետապնդում է սկսվել եւ մեղադրանք ներկայացվել ռաֆտինգ կազմակերպած ընկերության տնօրենին:

Նշվում է, որ Դեբեդ գետի վարարման ընթացքում գետի վրա կազմակերպել է ռաֆտինգի ծառայություն, որպես ռաֆտինգ թիմի անդամներ՝ ներգրավել է սիրողական անձնակազմ, սահմանված կարգով չի նշանակել պատասխանատու անձ՝ հրահանգիչ:

«Արմինե Ճաղարյանին նավարկելուց առաջ ռաֆտինգի անվտանգության հրահանգների պահանջներին առնչվող հարցերով սահմանված կարգով գրավոր ուսուցում եւ հրահանգավորումներ չի անցկացրել, ռաֆտինգից օգտվելու հրահանգների պահանջների վերաբերյալ անվտանգության գծով գիտելիքների ստուգում եւ հրահանգավորում չի կատարել», - ասված էր հաղորդագրությունում:

Մեղադրանքն առաջադրվել էր անվտանգության պահանջներին չհամապատասխանող ապրանքներ թողարկելը կամ իրացնելը, աշխատանքներ կատարելը կամ ծառայություններ մատուցելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ: Արդյունքում, Արմինե Ճաղարյանի մահվան գործով մեղադրանք է առաջադրվել ռաֆտինգի ընկերության տնօրենին Հիշեցնենք, որ դեպքը եղել էր 2022 թվականի մայիսի 9-ին: «Շանթ» հեռուստաընկերությամբ հեռարձակվող «Ճամպրուկս ու ես» հաղորդման վարող Արմինե Ճաղարյանը ողբերգական պատահարի զոհ էր դարձել: Նա Դեբեդ գետում նավակով նկարահանումներ իրականացնելիս գետն էր ընկել:

Նախաքննության ընթացքում նշանակված դիակի դատաբժշկական փորձաքննությամբ պարզվել է, որ տուժողի մահվան պատճառ է հանդիսացել շնչառական ուղիները հեղուկով փակվելու՝ ջրահեղձման հետեւանքով մեխանիկական շնչահեղձությունը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ԹՅՈՒՐԻՄԱՑՈՒԹՅՈ՞ՒՆ ԹԵ՞ ԴԻՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

«Ժողովուրդ» օրաթերթը փաստաբան Արմեն Անդրիկյանի հետ զրուցել է «Հանրապետական շտապօգնության ծառայության» նորանշանակ տնօրեն Սահակ Հակոբյանին մեղադրանք առաջադրելու եւ կաշառքի դիմաց զինվորին բանակից ազատելու քրեական վարույթի մասին:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Արմեն Անդրիկյանը հայտնեց, որ Սահակ Հակոբյանը չի ընդունում իրեն առաջադրված մեղադրանքը. «Մեղադրանք է առաջադրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով առանձնապես խոշոր չափի կաշառք ստանալու հատկանիշով: Գումարի չափը չեմ կարող ասել՝ նախաքննական գաղտնիք է: Մեղադրանք առաջադրելուց հետո՝ միջնորդություն է ներկայացվել դատարան՝ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու համար, սակայն դատարանը Սահակ Հակոբյանին առաջադրված մեղադրանքում իրեն մեղսագրվող արարքի բացակայության հիմքով՝ այսինքն՝ հիմնավոր կասկածի հիմքով, միջնորդությունը մերժել է»:

Հարցին, թե ինչ է մտածում Սահակ Հակոբյանն իրավապահների կողմից իրեն ամեն գնով կալանքի տանելու գործընթացի մասին, Արմեն Անդրիկյանն ասաց, թե կատարվածը կմեկնաբանի որպես թյուրիմացություն, ինչպես նաեւ իրավապահ մարմինների ոչ ճիշտ աշխատանքի արդյունք:

Հանրապետական շտապօգնության ծառայության» նորանշանակ տնօրեն Սահակ Հակոբյանը վերադարձել է իր աշխատանքին:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ «Հանրապետական շտապօգնության ծառայության» նորանշանակ տնօրեն Սահակ Հակոբյանին եւ եւս մի քանի անձի Հակակոռուպցիոն կոմիտեն ձերբակալել է: ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ կաշառքի գործով են վերջինիս ձերբակալել, եւ անգամ միջնորդություն է ներկայացվել դատարան՝ նրան կալանավորելու գործով:

Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեից հաստատեցին, որ Հանրապետական շտապօգնության ծառայության տնօրենին մեղադրանք է ներկայացվել զորակոչիկին բժշկական կեղծ ախտորոշման հիմքով պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից ազատելու դիմաց առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու համար:

Բացի տնօրենից՝նույն վարույթի շրջանակում մեղադրյալի կարգավիճակ ունի եւս երեք անձ, որոնց նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԻՐԱՎԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԸՆԴԴԵՄ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ

Դատական կարգադրիչներն իրենց իրավունքները վերականգնելու համար դատի են տալիս դատական դեպարտամենտին:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ դատական կարգադրիչ Արման Հովհաննիսյանը դիմել է վարչական դատարան ու պահանջում է, որ դեպարտամենտի դատական կարգադրիչների ծառայության պետի թիվ 347-Ա հրամանն անվավեր ճանաչեն, վերջինիս նախկին աշխատանքին վերականգնելու, հայցվորին հարկադիր պարապուրդի ողջ ժամանակահատվածի համար վճարելուն պարտավորեցնեն:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՋՐՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՐՔԵԼՈՒ ՊԱՀԱՆՋ

Բագրատ Սրբազանի վերաբերյալ զրպարտությունը հերքելու պահանջով՝ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան է ներկայացվել հայցադիմում՝ ընդդեմ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հիմնադրած civic.am լրատվամիջոցի եւ լրագրող Դավիթ Լեւոնյանի, հայտնում են «Սրբազան պայքար» տելեգրամյան ալիքից:

Հայցադիմումն ընդունվել է վարույթ, առաջին դատական նիստը նշանակվել է սեպտեմբերի 6-ին՝ ժամը 12:00-ին, նշված դատարանի «Արաբկիր» նստավայրում:

Բագրատ Սրբազանի վերաբերյալ զրպարտությունը հերքելու պահանջով հայցադիմում է ներկայացվել նաեւ ընդդեմ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանի: Հայցադիմումը վարույթ ընդունելու եւ դատական նիստ նշանակելու մասին տեղեկություն առայժմ առկա չէ:

Նշված երկու գործերով Բագրատ Սրբազանի շահերը դատարանում ներկայացնելու է փաստաբան Աննա Փիլոսյանը:

ՍԴ ՎԱՐՈՒՅԹԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ

ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի փաստաբանական խումբը հայտարարություն է տարածել՝ Սահմանադրական դատարանի կողմից ՀՀ օրենսգրքի (1998 թ.) 309.1-ին հոդվածի 3-րդ մասը Սահմանադրությանը համապատասխանեցնելու որոշման առնչությամբ, որը ներկայացնում ենք համառոտ:

Փաստաբանական խումբը, մասնավորապես, փաստեր է ներկայացրել այն մասին, որ ընդդեմ Ռոբերտ Քոչարյանի ՍԴ վարույթի քննությունը անցել է խախտումներով:

Մասնավորապես՝ ի սկզբանե վարույթից հեռացրել են Հրայր Թովմասյանին, այն պատճառաբանությամբ, որ Քոչարյանի փաստաբանական թիմի անդամ Արամ Օրբելյանը Թովմասյանի սանիկն է, այսինքն՝ Թովմասյանը կողմնակալ կարող է լինել:

Սեդա Սաֆարյանն ինքն է հրաժարվել՝ նշելով, որ չի կարող «այս պատմության մեջ մտնել»:

Քննությանը մասնակցել է Սասուն Խաչատրյանի եղբայրը՝ Դավիթ Խաչատրյանը: Ըստ ամենայնի՝ Դավիթ Խաչատրյանին պաշտոն են խոստացել:

Սահմանադրական դատարանի վարույթի քննությանը մասնակցել է նաեւ Վահե Գրիգորյանը, որը նույնպես Մարտի 1-ի գործով կողմ է:

Կարճ ասած՝ հասարակությանը մոլորեցնելու համար նորից մարտի 1-ի արյունալի էջն է փորձում վերաբացել Նիկոլ Փաշինյանը, բայց ոչ թե գործը քննելու, այլ խիստ վիճահարույց գործընթացներ նախաձեռնելով: Քոչարյանի շուրջ կատարվողը կարելի է բնորոշել ամեն ինչ. քինախնդրություն, վրեժխնդրություն, կամայական արդարադատություն, բայց ոչ երբեք Մարտի 1-ի բացահայտում: Հիշեցնենք, որ անցնող 6 տարիների ընթացքում Նիկոլ Փաշինյանը մարտի 1-ի 10 զոհերից որեւէ մեկի սպանությունը այդպես էլ չբացահայտեց:

● Ըստ ոստիկանության տվյալների՝հուլիսի 30-ից հուլիսի 31-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 104 դեպք, որից 5-ը՝նախկինում կատարված:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԲՈՒԺԿԵՏԸ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԿԱՅԱԿԱՆ ՉԻ ՈՒՆԵՑԵԼ

4 տարի է, ինչ սահմանամերձ, հեռավոր Բարեկամավան գյուղի բուժկետի տանիքի կեսը ուժգին քամուց պոկված է, անձրեւները, ձյունը լցվում են շենքից ներս՝ հակասանիտարական վատ վիճակ ստեղծելով բուժկետում: Բուժկետը գործում է Տավուշի մարզպետարանի ենթակայությամբ, այն հանդիսանում է հարեւան՝ Կոթի գյուղի գյուղական ամբուլատորիայի ենթակայությամբ: Անցած 4 տարում, որպես Տավուշի մարզի լրագրող, բազմաթիվ անգամ դիմել եմ Տավուշի մարզպետարան՝ հարցնելով, թե ե՞րբ են նորոգելու բուժկետի շենքի տանիքը: Վերջին հարցմանս Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը այսպես է պատասխանել. «Նոյեմբերյան համայնքի «Կոթիի ԳԲԱ» ՊՈԱԿ-ի ենթակայության Բարեկամավանի բուժկետի շենքի վերանորոգման եւ վերակառուցման համար կադաստրի վկայական ստանալու գործընթացը ավարտական փուլում է (որից հետո կսկսվի վերանորոգումվերակառուցումը): Բուժակ-մանկաբարձական կետը տեղափոխված է Բարեկամավանի նախկին գյուղապետարանի վերանորոգված տարածք եւ իր գործունեությունը ժամանակավորապես ծավալում է այնտեղ»: Հայկ Ղալումյանը 2021թ. ապրիլի 8-ից Տավուշի մարզպետն է, ինչո՞ւ չի իմացել, որ իր ենթակայությամբ գործող Բարեկամավանի բուժկետը կադաստրի վկայական չունի, որ վկայական հանեն: 2005 թվականին ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ «Վորլդ վիժն» եւ «Ապավեն համայնքներին» կազմակերպությունները վերանորոգել, կահավորել են Բարեկամավանի բուժկետի շենքը՝ առանց կադաստրի վկայականի. ո՞ւմ պատկանող շենքն են նորոգել, կահավորել այդ կազմակերպությունները:

ՀԵՌԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄ ԵՆ ՏԵՂԱԴՐԵԼ

Սահմանազատման անվան տակ, միակողմանի, ապօրինի կերպով հանձնվեցին Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի հարակից գոտում, Կիրանց-Բաղանիս հատվածում գտնվող կարեւոր, 30 տարում ամրացված դիրքերը: Ադրբեջանին նույնիսկ նախատեսվածից ավելի դիրքեր են հանձնել: Օրինակ՝ Բաղանիս-Այրումին հարակից գոտում գտնվող« Նոր տարի» պաշտպանական դիրքը ի սկզբանե չէր նախատեսվում հանձնել, սակայն, ի վերջո, այն հանձնեցին Ադրբեջանի զինուժին: Երկու օր առաջ ադրբեջանական դիրքում՝ բլրի գագաթին, վերջերս տեղադրված սարքավորում ենք նկատել: Այդ սարքավորումը տեսանելի է Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհով անցնողներին: Ենթադրվում է, որ այն նախատեսված է Հայաստանի տարածքի խորքում դիտարկումներ, հետախուզում կատարելու համար:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

Seaside Startup Summit

Fastex-Ը՝ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐ

Fastex էկոհամակարգն այս տարի նույնպես իր ակտիվ մասնակցությունը ցուցաբերեց Seaside Startup Summit 2024-ին՝ որպես միջոցառման գլխավոր գործընկեր: Այս նախաձեռնության հետ համագործակցությունն սկիզբ է առել դեռ 2019 թվականից:

«Որպես արագ զարգացող Web3 էկոհամակարգ՝ Fastex-ը մշտապես կարեւորում է նորարարական գաղափարների, նախագծերի եւ առաջատար տեխնոլոգիաների կիրառումը եւ զարգացումը: Հենց այդ նպատակով այս տարի եւս աջակցում ենք տարածաշրջանում SS ոլորտի ամենամասշտաբային իրադարձությանը՝ Seaside Startup Summit-ին», - նշել է «Ֆասթեքսի» համահիմնադիր Ռոման Բադալյանը:

Միջոցառման օրերին մասնակիցների ուշադրությունը գրավել են Fastex-ի եւ AKNEYE-ի կողմից կազմակերպված տեղեկատվական հանդիպումները:

Հուլիսի 24-ին տեղի ունեցած Fastex 14-րդ տեղեկատվական հանդիպման ընթացքում որպես խոսնակ հանդես են եկել Fastex-ի վճարումների բաժնի ղեկավար Մերի Միրիջանյանը եւ պրոդուկտի պատասխանատու Դիանա Պարտիզպանյանը:

Խոսնակները ներկայացրել են Fastex թվային եւ ֆիզիկական քարտերը, որոնք արդեն հասանելի են եւ հնարավորություն են տալիս օնլայն եւ օֆլայն տարբերակով իրականացնել վճարումներ ամբողջ աշխարհում՝ քարտերը կրիպտոարժույթներով լիցքավորելու դեպքում:

Ներկայացվել են նաեւ Bahamut հիմնադրամի դրամաշնորհային ծրագրի շրջանակում հաջողությամբ ֆինանսական աջակցություն ստացած եւ արդեն գործող ստարտափային DeFi նախագծերը, ինչպիսիք են Mutuari-ն, Lolik-ը եւ SilkSwap-ը:

Նշենք, որ Բահամուտ հիմնադրամն ակտիվորեն շարունակում է իր գործունեությունը՝ օգնելով ստարտափ նախագծերին կառուցել իրենց բիզնեսը Web3 տիրույթում, մասնավորապես՝ Բահամուտ բլոկչեյնում: «Ֆասթեքսի» տեղեկատվական հանդիպման շրջանակում մասնագետները զրուցել են դեռեւս SSS19-ում «Ֆասթեքսի» կողմից ֆինանսավորում ստացած ստարտափ նախագծերից մեկի՝ ForestBerg-ի համահիմնադիր Ալբերտ Ամիրբեկյանի հետ: Ալբերտը ներկաներին պատմել է «Ֆասթեքսի» ֆինանսական աջակցության շնորհիվ թիմային նախագծերում իրականացրած բարելավումների մասին:

AS տեխնոլոգիաների եւ հեռավար զոնդավորման օգնությամբ տարբեր ինժեներական լուծումներ տրամադրող ForestBerg-ը «Ֆասթեքսի» կողմից ստացած 10.000 FTN դրամաշնորհին ուղղել է գեոդեզիական դրոնի եւ այլ սարքավորումների ձեռքբերմանը:

Հուլիսի 25-ին AKNEYE-ն իր հերթին «Ֆասթեքսի» տաղավարում պանելային քննարկում է նախաձեռնել տեղեկատվական հանդիպման շրջանակում: Քննարկման մասնակիցներն էին հայազգի արտիստներ Գարեգինը եւ Սարկո Մենեն եւ վրաստանից ժամանած Մակո Լոմաձեն: Արտիստները պատմել են AKNEYE-ի հետ գործակցության, առաջիկա նախագծերի, Վենետիկի AKNEYE ֆիջիթալ տարածքում իրենց փորձառության եւ գաղափարների մասին: Միջոցառումը եզրափակվել է ստարտափներին մրցանակներ հանձնելու արարողությամբ, որի ընթացքում «Ֆասթեքս» էկոհամակարգի համահիմնադիր Ռոման Բադալյանը մրցանակը հանձնել է «Հովիվ» ստարտափ նախաձեռնությանը, որն արհեստական բանականության միջոցով նորարարական լուծումներ է առաջարկում գյուղատնտեսության եւ անասնապահության ոլորտներում գործող կազմակերպություններին:

Fastex-ի մասին

Fastex-ն արագ զարգացող Web3 էկոհամակարգ է, որն իր օգտատերերին տրամադրում է բազմաթիվ հնարավորություններ եւ հարմարավետ միջավայր՝ առաջարկելով Fastex Exchange փոխանակման հարթակը, Fastex Card, Fastex Wallet եւ ftNFT հարթակը՝ իր ֆիջիթալ տարածքներով, ինչպես նաեւ Lidus թոքենների ստեղծման, White-Label Exchange եւ NFT Marketplace-ի ծառայությունները: Fastex-ը կարեւորում է անվտանգ եւ հուսալի միջավայրի ապահովումը բոլոր օգտատերերի համար համաշխարհային թվային ֆինանսների զարգացող ոլորտում՝ մշտապես հետեւելով առկա կանոնակարգերին:

ԼՈՒՐԵՐ

«ՕԳՆԵՆՔ ՄԻԱՍԻՆ». Yandex

Դեբեդ գետի վարարումն ու բազմաթիվ ավերածությունները Լոռու մարզ տարան նաեւ «Ժողովուրդ» օրաթերթին: Նկարահանող խումբը որոշեց ոչ թե սեփական մեքենայով, այլ Yandex Go-ի միջոցով հասնել Հայաստանի հյուսիսային բնակավայրեր՝ աղետի գոտու մասին տեսանյութեր եւ հոդվածներ պատրաստելու:

Մեքենա պատվիրելիս նկատեցինք, որ Yandex Go հավելվածում ավելացել է «Օգնենք միասին» կոճակը, որը հնարավորություն է տալիս փոքր գումարով մեծ բարեգործական արշավի մաս կազմել:

Ընտրելով գումարի չափը՝10, 30, 50, 100 կամ 500 դրամ, ուղեւորը բաժանորդագրվում է նվիրատվություն անելու: Ամեն անգամ քարտով վճարելիս այդ գումարն ավելանում է ուղեւորության արժեքին, Yandex Go-ն էլ, իր հերթին, կրկնապատկում է այն եւ ուղղում բարեգործությանը:

«Ժողովուրդ» օրաթերթի խմբագրությունից մինչեւ Լոռու մարզկենտրոն՝ Վանաձոր, ուղեւորության արժեքը կազմեց մոտ 20 հազար դրամ: Ակտիվացնելով «Օգնենք միասին» կոճակը՝ մենք, փաստացի, 500 դրամ ուղղեցինք բարեգործությանը: Արդյունքում՝ ապահով հասանք Լոռի՝ միաժամանակ գումար նվիրաբերելով նրանց, ովքեր մեր օգնության կարիքն ունեն: «Օգնենք միասին»-ին կարելի է բաժանորդագրվել կամ կասեցնել բաժանորդագրությունը ցանկացած պահի՝ Yandex Go հավելվածի ձախ անկյունում գտվող ընտրացանկում սեղմելով համապատասխան կոճակը:

Իսկ ո՞ւմ է փոխանցվում ուղեւորների նվիրատվությունը եւ ո՞ւմ միջոցով է հասնում հասցեատերերին:

Նվիրատվությունն ուղղվում է «Հայ մայրեր», «VIVA», «Շտապիր դեպի բարին» եւ «Սիթի օֆ Սմայլ» բարեգործական հիմնադրամներին: Հավաքագրված գումարը, նախ, փոխանցվում է «ՆԻԿԱ» ենթակառուցվածքային հիմնադրամ, որը հավասարապես բաշխում է կազմակերպությունների միջեւ: Հավաքված միջոցներով բարեգործական կազմակերպությունները կարող են օգնել իրենց շահառուներին, ֆինանսավորել ծրագրերը եւ շարունակել գործունեությունը:

ՆՈՐ ԵՎ ԵԶԱԿԻ ԾՐԱԳԻՐ

2024-2025 ուս. տարվանից Հայաստանում առաջին անգամ ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում կմեկնարկի «Կենսաբազմազանության ուսումնասիրություն եւ պահպանություն» նոր մագիստրոսական կրթական ծրագիրը, որն իրականացվում է Ա.Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի հետ համատեղ:

Ծրագրի նպատակն է պատրաստել ազգային եւ միջազգային աշխատաշուկաների պահանջներին համապատասխանող կենսաբազմազանության եւ վայրի բնության պահպանության որակյալ մասնագետներ: Եվ այսօր առավել քան երբեւէ, երբ Հայաստանում ինչպես եւ ողջ աշխարհում հասարակությունը բախվում է բնապահպանական ճգնաժամի երկրում առկա է նման մասնագետների կարիք:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 10 պատահար. 18 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Էկոնոմիկայի նախարարությունից տեղեկացնում են, որ նոյեմբերի 25-28-ը Իրաքի Հանրապետության Էրբիլ քաղաքում անցկացվելու է Agro Pack 2024 գյուղատնտեսական միջազգային ցուցահանդեսը:

Հիմնական ուղղություններն են՝ սնունդ, փաթեթավորում, պլաստիկի արտադրություն, գյուղատնտեսություն, արդյունաբերություն:

Ցուցահանդեսին Հայաստանի մասնակցությունը նախատեսված է միասնական տաղավարով, որն ընկերություններին կտրամադրվի անվճար: Կացության եւ ճանապարհային ծախսերը հոգում են մասնակիցները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿԱՆԻՇԸ

«Fitch» միջազգային վարկանիշային գործակալությունը հաստատել է Հայաստանի Հանրապետության՝ արտարժույթով եւ ազգային արժույթով երկարաժամկետ պարտավորությունների թողարկման սուվերեն «BB-» վարկանիշը՝ «կայուն» հեռանկարով: Այս մասին նշված է միջազգային վարկանիշային գործակալության հրապարակած զեկույցում:

Գործակալությունը նշում է, որ Հայաստանի BB» վարկանիշն արտացոլում է մեկ շնչին ընկնող եկամուտների եւ կառավարման ցուցանիշները, որոնք համադրելի են գործընկերներին, աճի ուժեղ հեռանկարներին եւ մակրոտնտեսական քաղաքականության կայուն շրջանակին: Միաժամանակ վարկանիշի բարձրացմանը խանգարում են բյուջեի զգալի դեֆիցիտը, ֆինանսական հատվածի բարձր դոլարայնացումը, ինչպես նաեւ աշխարհաքաղաքական ռիսկերը:

Գործակալությունն, անդրադառնալով Հայաստանի տնտեսական բարձր աճին, ընդգծել է, որ այն շարունակվում է՝ Ռուսաստանից, Բելառուսից, Ուկրաինայից եւ այժմ՝ Լեռնային Ղարաբաղից ուժեղ ներքին միգրացիայի շնորհիվ:

«Իրական ՀՆԱ-ն 2023 թվականին աճել է 8,7%-ով եւ 2024 թվականի առաջին եռամսյակում կազմել է 9,2%՝ տարեկան: Ակնկալվում է, որ զբոսաշրջության ու տեղեկատվական եւ կապի տեխնոլոգիաների ոլորտները կլինեն աճի կարեւոր շարժիչ ուժեր, Ամուլսարի ոսկու հանքի շահագործման մեկնարկը 2025 թվականից դրական կլինի արտահանման եւ աճի համար», - նշված է գործակալության զեկույցում, որտեղ կանխատեսվում է, որ 2024 թվականին Հայաստանի տնտեսական աճը կկազմի 6%, 2025 թվականին՝ 5,5%, իսկ 2026 թվականին՝ 5,1%:

Team Telecom Armenia ԵՎ ԹՈՒՄՈ

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴԼԱՅՆՎՈՒՄ Է

Team Telecom Armenia-ի եւ Թումոյի միջեւ ռազմավարական գործընկերությունն ընդլայնվում է՝ ներառելով եւս մեկ կրթական նախագիծ: Խոսքը Թումո ճամբարի մասին է, որի շրջանակում մասնակիցները ձեռք են բերում տարաբնույթ հմտություններ ու գիտելիքներ, հաստատում կապեր ամբողջ աշխարհից դասանիների հետ, ինչպես նաեւ վայելում ակտիվ մշակութային եւ ժամանցային ծրագիր: Team-ի աջակցության շնորհիվ այս տարի ամառային ճամբարին մասնակցելու հնարավորություն ունեցան նաեւ արցախցի դասանիներ:

Հինգ շաբաթ տեւող Թումո ճամբարն այս անգամ անցկացվեց Երեւանում եւ Դիլիջանում: Յուրաքանչյուր շաբաթ փոխվում էին մասնակիցները, եւ ըստ նրանց հետաքրքրությունների՝ փոխվում էր նաեւ ծրագրի բովանդակությունը:

«Թումո ամառային ճամբարում ես ինձ համար նոր ոլորտ բացահայտեցի՝ ծրագրավորումը: Մինչ այդ պատկերացում չունեի ծրագրավորման մասին եւ կարծում էի, որ ինձ մոտ չի ստացվի: Հիմա ես շատ եմ ուզում հետագայում ավելի շատ ուսումնասիրել այդ թեման: Ճամբարի ընթացքում ծանոթացա այլազգի երեխաների հետ ու շատ բան սովորեցի նրանց երկրների եւ մշակույթի մասին: Շատ ուրախ էի նաեւ ճամբարի ընթացքում արցախցի իմ ընկերներին կրկին հանդիպելու համար: Մի խոսքով՝ ունեցա նոր ընկերներ, ստացա գիտելիքներ եւ հաճելի ժամանակ անցկացրի»,- ասում է ճամբարի մասնակից Էլեն Դանիելյանը, որը եղել է նաեւ Թումո Ստեփանակերտի ուսանող:

Team-ը խթանում է տեխնոլոգիական կրթությունը, եւ արցախցի պատանիների ներգրավումը Թումո ճամբարում այդ ջանքերի կարեւոր մասն է կազմում: Սա պատանիներին հնարավորություն կտա զարգացնելու իրենց թվային հմտությունները եւ ինտեգրվելու տեխնոլոգիական աշխարհին:

Կրթական բաղադրիչից բացի՝ ճամբարը նաեւ մշակութային կամուրջ ստեղծեց՝ թույլ տալով պատանիներին շփվել իրենց հասակակիցների հետ Հայաստանից եւ արտերկրից:

Ճամբարն ուներ հագեցած կրթական եւ ժամանցային բաղադրիչներ: Մասնակիցները սովորեցին Թումոյի հիմնական ծրագրի ուղղություններում՝ ծրագրավորում, լուսանկարչություն, երաժշտություն, ինչպես նաեւ խաղերի ստեղծում, գրաֆիկ դիզայն, անիմացիա, 3D մոդելավորում ու ռոբոտաշինություն: Նրանք այցելեցին պատմամշակութային վայրեր, թանգարաններ, մասնակցեցին տարատեսակ սպորտային խաղերի, իսկ ճամբարի ավարտին ներկայացրին իրենց նախագծերը: Հիշեցնենք, որ Team Telecom Armenia-ն եւ Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը ստորագրել էին հուշագիր Հայաստանում արդեն գործող եւ առաջիկայում բացվող Թումո կենտրոններին ու տուփերին ինտերնետով ապահովելու վերաբերյալ: Հուշագիրը համագործակցություն է սահմանում նաեւ ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող Թումո լաբեր նախագծի եւ 42 Երեւան ծրագրավորման դպրոցի հետ, որի շրջանակում Team-ի մասնագետներն իրականացնելու են կրթական հանդիպումներ եւ ծրագրեր այս նախագծերում ներգրավված ուսանողների հետ:

ԲԱՆԿԱՅԻՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԽԹԱՆՈՒՄ Է «ԱԿԲԱ» ԲԱՆԿԸ

«Ակբա» բանկը «Գերմանական խնայողական բանկերի միջազգային համագործակցության միավորման» կողմից Իջեւանում կազմակերպված էներգաարդյունավետության էքսպոյի շրջանակում բիզնեսներին եւ անհատներին ներկայացրել է էներգաարդյունավետ ու էներգախնայող արտադրանքների ֆինանսավորման ճկուն տարբերակներ:

Էներգաարդյունավետության էքսպոյի շրջանակում ներկայացվել են հայկական արտադրության ջրատաքացուցիչներ, հոսանքով աշխատող կաթսաներ, տաք հատակներ ու արեւային այլ էներգաարդյունավետ ու «կանաչ» արտադրանքներ:

«Ուրախ ենք, որ «Ակբա» բանկը միացել է այս միջոցառմանը: Հայաստանն այնքան արեւ ունի, որ առաջիկա տարիներին կարող է լուրջ առաջընթաց գրանցել «կանաչ» էներգիայի արտադրության ոլորտում: Այդ ճանապարհին «Ակբա» բանկը կանգնած է բնակիչների կողքին՝ առաջարկելով ֆինանսական հետաքրքիր լուծումներ, որպեսզի մարդիկ կարողանան օգտվել «կանաչ» տեխնոլոգիաների առավելություններից»,- նշել է «Գերմանական խնայողական բանկերի միջազգային համագործակցության միավորման» հայաստանյան ներկայացուցչության ղեկավար Էրիկ Բյոտտխերը:

Այս տարի «Ակբա բանկը» Euromoney ֆինանսական պարբերականի կողմից ESG (բնապահպանական, սոցիալական եւ կառավարում) չափանիշներով Հայաստանում ճանաչվել է լավագույնը՝ հաշվի առնելով ESG շրջանակում բանկի վարկային պորտֆելի կայուն աճն ու վերջինիս աճող մասնաբաժինը: Հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը՝ «Ակբան» մշակել եւ շուտով ներդնելու է նաեւ «կանաչ» վարկերի տրամադրման սեփական ընթացակարգերը, որոնց միջոցով սահմանվելու են «կանաչ» վարկերի չափանիշներն ու CO2-ի արտանետման հաշվարկման մեխանիզմները:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

Fastex–Ը ՀՈՎԱՆԱՎՈՐԵԼ Է ՄՐՑՈՒՅԹԸ

«Ֆասթեքսը» հովանավորել է հուլիսի 26-ին Sevan Startup Summit 2024-ի շրջանակներում տեղի ունեցած հաշմանդամային կիբերսպորտի «Metagait: Cyber Football» մրցույթը, որի կազմակերպիչն էր «ՔայլՏեք»-ը:

Ֆասթեքսի աջակցությամբ ձեռք է բերվել նորարարական MetaGait նեյրովերականգնողական սարքը, որը թույլ է տալիս մի քանի օգտագործողների խաղալ մեկ միջավայրում: Սարքի շնորհիվ խաղացողները, կատարելով քայլքի իմիտացիա, հայտնվել էին վիրտուալ իրականություն եւ մրցել միմյանց դեմ՝ ֆուտբոլի ձեւաչափով:

«Քայլ թեք» ընկերության մարքեթինգի բաժնի պատասխանատու Լիլիթ Սարգիսյանը, կարեւորելով խաղերի իրականացումը, նշել է, որ ապագայում դրանք վերածվելու են մեծ մրցաշարերի համաշխարհային մակարդակով. «Արդեն երկրորդ տարին է, որ նման մրցույթ ենք իրականացնում, ու սա շատ կարեւոր նախադեպ է հատկապես ֆուտբոլի պարագայում, որն աշխարհում մարդկանց մեծ մասի սիրելի խաղերից է: Երբ սկսեցինք ֆուտբոլի խաղի ստեղծման աշխատանքները, բոլորի մոտ մեծ ոգեւորություն էր, հատկապես՝ սարքն օգտագործողների մոտ», - ասել է նա:

Մրցույթին մասնակցել են 6 անձինք՝ երկու թիմերով: Նախատեսված էր հաղթող թիմին պարգեւատրել 900.000 դրամին համարժեք FTN-ով, իսկ պարտվող թիմին՝ 300.000 դրամին համարժեք FTN-ով: Մրցույթի ավարտին, սակայն, թիմերը որոշել են հավասարապես բաշխել ֆոնդը՝ յուրաքանչյուր մասնակցին տրամադրելով 200.000-ական ՀՀ դրամին համարժեք FTN-ներ:

Այս համագործակցությամբ «Ֆասթեքսը» վերահաստատում է իր պատրաստակամությունը՝ ձեւավորելու տեխնոլոգիապես զարգացած հասարակություն, որտեղ բոլորը կարող են ունենալ հավասար հնարավորություններ՝ անկախ սահմանափակումներից:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԲՌՆԱՅՈՒՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՆՈՒՄ» Է ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Վատիկանի "L'Osservatore Romano" պաշտոնաթերթում վերջերս արված հրապարակմանն է անդրադարձել «Գեղարդ» հիմնադրամը, որը ներկայացնում ենք ստորև:

«Ադրբեջանի կողմից հայկական ժառանգության «աղվանացման» քաղաքականությունը Վատիկանի պաշտոնաթերթում Վատիկանի L'Osservatore Romano պաշտոնաթերթը վերջերս հրատարակեց մի հոդված՝ "A Khudavang, Ganjasar e Khatiravang Monasteri tra le nuvole" վերնագրով («Դադիվանքը, Գանձասարը եւ Խաթրավանքը ամպերի մեջ»), որտեղ հայկական ժառանգության կարեւորագույն հուշարձանները՝ Դադիվանքը, Գանձասարը եւ Խաթրավանքը ներկայացվում են որպես աղվանական ժառանգություն: Նյութի հեղինակը Ռոսելլա Ֆաբիանին է, որը հոդվածում խոսում է Ադրբեջան կատարած իր այցելությունների մասին եւ նշում, որ այցելել է «Garabagh» /ընդգծումը՝ հոդվածից/, ծանոթացել աղվանական ժառանգության նշանավոր վանքերին:

Հարկ է նշել, որ հոդվածը զուրկ է գիտական հիմքից եւ հակասում է գիտականության չափանիշներին՝ հիմնված լինելով միայն հեղինակի դիտարկումների եւ տպավորությունների վրա: Անգամ հոդվածի վերնագրում հայկական հուշարձանների ադրբեջանականացված անվանումների օգտագործումը ցուցում է, որ ադրբեջանական պետական քարոզչությունը տեղ է գտել նաեւ Վատիկանի պաշտոնաթերթում:

Ադրբեջանի կողմից հայկական մշակութային ժառանգության «աղվանացման» թեզի մասին բազմիցս ներկայացվել է «Գեղարդ» հիմնադրամի ակադեմիական հարթակում: Պետք է նշենք, որ հայկական մշակութային ժառանգության բռնայուրացման այս մեխանիզմը միջազգային նոր հարթակներ է գրավում, ինչի հիմքում, բնականաբար, Ադրբեջանի հարուստ նավթարդյունաբերությունն ու պետության կողմից հսկայական գումարների ներդրումն է՝ միջազգային կառույցների եւ կազմակերպությունների գործունեության մեջ: Ադրբեջանը պատմակեղծարարությունը դարձրել է ոչ միայն պետական քաղաքականություն, այլեւ միջազգային հարթակներից հնչող տեսություն: Բաքուն մի կողմից իբրեւ թե կերտում է իր «բազմամշակութային եւ ժողովրդավար» կերպարը, մյուս կողմից «միջազգայնացնում» է հայկական մշակութային ժառանգության բռնայուրացման մեխանիզմները: Ընդամենը ամիսներ առաջ այսպես կոչված «աղվանական ժառանգության» ֆոտոցուցահանդես կազմակերպվեց Լեհաստանում, որտեղ կրկին Ադրբեջանի դեսպանատունն ուներ իր ակտիվ ներգործությունը: Այս ամբողջը վտանգավոր հող է պատրաստում հայկական ժառանգության ինքնության խեղաթյուրման, պատմական փաստերի կեղծման եւ միջազգային հարթակների միջոցով այդ թեզերի տարածման համար:

«Գեղարդ» հիմնադրամը դատապարտում է ալիեւյան բռնապետական ռեժիմի՝ հնարավոր բոլոր միջոցներով հայկական մշակութային ժառանգության բռնայուրացման քաղաքականությունը եւ կոչ է անում միջազգային հեղինակավոր գիտական կազմակերպություններին ու կառույցներին, ՋԼՄ-ներին, տուրք չտալ ադրբեջանական պետական հակահայկական քարոզչությանը»:

ՅՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԽ ՄԵԴԱԼԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿԸ

Հուլիսի 30-ին խաղարկվեցին մեդալների հերթական հավաքածուները 2024 թվականի Փարիզի Օլիմպիական խաղերում:

Մրցաշարային աղյուսակի առաջատարը շարունակում է մնալ Ճապոնիայի հավաքականը, որն այս պահին նվաճել է 7 ոսկե, 2 արծաթե եւ 4 բրոնզե մեդալ:

Երկրորդ տեղում Չինաստանն է՝ 6 ոսկե, 6 արծաթե եւ 2 բրոնզե մեդալ:

Լավագույն եռյակը եզրափակում է Ավստրալիայի հավաքականը, որը նվաճել է ոսկե 6, արծաթե 4 եւ բրոնզե 1 մեդալ:

ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՆ ՀԱՅՏ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

Սաուդյան Արաբիան ՖԻՖԱ-ին պաշտոնական հայտ է ներկայացրել 2034 թվականի ֆուտբոլի աշխարհի առաջնությունն անցկացնելու համար: Դա տեղի է ունեցել Փարիզում ՖԻՖԱ-ի միջոցառման ժամանակ:

Սաուդյան Արաբիայի պատվիրակությունը գլխավորում էր Սաուդյան Արաբիայի արքայազն եւ սպորտի նախարար Աբդուլ Ազիզ բին Թուրքի Ալ Սաուդը:

«Սաուդյան Արաբիայի՝ 2034 թվականի աշխարհի առաջնությունն ընդունելու հայտը ապագայի հայտ է: Սա մեր երեխաների եւ նրանց համար է, ովքեր մեծ երազանք ունեն:

Թագավորությունը նպատակ ունի հյուրընկալել ֆուտբոլի աշխարհի ամենակարեւոր իրադարձությունը, որը կհաստատի իր ազդեցիկ դիրքը համաշխարհային ասպարեզում տարբեր ոլորտներում, այդ թվում՝ սպորտում»,- նախարարի խոսքերն է մեջբերում Saudi Gazette-ը:

ԸՆԹԱՑԻԿ

«ՀՈՒՍՈ ԱՌԱԳԱՍՏ»

«Ֆասթ բանկի» աջակցությամբ հուլիսի 19-ից 21-ը Սեւանում կայացել է հեղինակային երգի 10-րդ «Հուսո առագաստ» միջազգային փառատոնը: Երեք օրվա ընթացքում հանդիսատեսը վայելել է փառատոնի նախնական փուլը հաղթահարած լավագույն տասը մասնակիցների, «Բարդերի ակումբ»-ի անդամների եւ արտերկրից ժամանած հեղինակների կատարումները:

«Ֆասթ բանկի» աջակցությամբ իրականացվող փառատոնի նպատակն է հայտնաբերել հեղինակ-կատարողների, նպաստել նրանց ստեղծագործական գործունեությանը, բեմ տրամադրել, ինչպես նաեւ արդեն ճանաչված հեղինակ-կատարողների եւ հեղինակային երգի սիրահարների հետ շփում ապահովել:

«Բարդերի» ակումբի հիմնադիր, երգահան Վախթանգ Հարությունյանը, կարեւորելով երգարվեստի բնագավառում բազմազանությունն ու երիտասարդների ներգրավումը, նշել է. «Այն երիտասարդները, ովքեր ինտեգրվել են այս փառատոնին, փառատոնային այն ավանդույթը, որը ձեւավորվել է այս ընթացքում, մեծ դեր ունենալու համար պարտական է «Ֆասթ բանկի» աջակցությունը եւ դրա գլխավոր հովանավորությունը»:

Հավելենք, որ հեղինակային երգի եռօրյա փառատոնի ընթացքում համերգներին զուգընթաց անցկացվել են նաեւ վարպետաց դասեր, եղել է փորձի փոխանակում:

«Ֆասթ բանկը» շարունակաբար «Բարդերի» ակումբի կողքին է եւ երկար տարիների ընթացքում աջակցում է դրա նախագծերին:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

«ԼՂ փախստականների իրավապաշտպան միություն»-ը ՅՈՒՆԵՍԿՕ-ին կոչ է արել ապահովել Լեռնային Ղարաբաղի բազմադարյա հայկական մշակութային ժառանգության անվտանգությունը:

«Լեռնային Ղարաբաղի փախստականների իրավապաշտպան միություն»-ը նամակով դիմել է ՅՈՒՆԵՍԿՕ-ին՝ կոչ անելով հավատարիմ մնալ սեփական առաքելությանը եւ իր մանդատի շրջանակներում ապահովել Լեռնային Ղարաբաղի բազմադարյա հայկական մշակութային ժառանգության անվտանգությունը:

«ԼՂ փախստականների իրավապաշտպան միություն»-ը ՅՈՒՆԵՍԿՕ-ի ուշադրությունն է հրավիրել 2020-2023 թթ. պատերազմների եւ արցախահայության էթնիկ զտումից հետո Լեռնային Ղարաբաղում հայկական պատմական եւ մշակութային ժառանգության դրությանը, Ադրբեջանի կողմից հայկական եկեղեցիների եւ սրբավայրերի քանդմանը, պղծմանը, յուրացման անժխտելի փաստերին, հայկական գերեզմանատների նկատմամբ իրականացվող «ճանապարհաշինարարական» վանդալիզմին, ազգային-պատմական կառույցների քանդմանը եւ այն բոլոր հանցանքներին, որոնք մեկ բառով կարելի է բնորոշել որպես էթնոցիդ՝ մշակութային ցեղասպանություն:

«Մենք շարունակում ենք հավատացած մնալ, որ հայկական պատմական-մշակութային ժառանգության անվտանգությունը հնարավոր է լավագույնս ապահովել միայն այդ ժառանգության կրողների՝ արցախահայության միջազգայնորեն երաշխավորված վերադարձի պարագայում»,- նշված է նամակի մեջ:

● *Օգոստոսի 7-ին՝ ժամը 19:30-ին, Բոհեմ թատրոնում կցուցադրվի «Անփորձանք գիշեր» կատակերգությունը: Տոմսերի արժեքը՝ 2500-6000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե ինչպես եւ որ լեզվով է իրականացվում ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ընդունումն ու ուսուցումը հաստատությունում:

Անի Մխիթարյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ ՀՀ ԿԳ նախարարի N 1640-Ն /24.11.2010թ./ հրամանով հաստատված «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման եւ հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու, ազատելու կարգի» 5-րդ կետի համաձայն՝ «Ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ընդունումը հաստատություն կարող է կատարվել սովորողի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող հաստատությունում (դասարանում), իսկ դրա բացակայության դեպքում ուսուցման լեզվի ընտրությունը կատարում է սովորողի ծնողը (նրա օրինական ներկայացուցիչը):

Եթե ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող հաստատությունում լիցենզիայով տրված սահմանային տեղերը լրացած են, եւ տվյալ բնակավայրում բացակայում է այլ հաստատությունում ազգային (մայրենի) լեզվով ուսուցման հնարավորությունը, ապա սովորողի ընդունելությունը տվյալ հաստատություն իրականացվում է՝ անկախ լիցենզիայով տրված սահմանային տեղերի սահմանափակումից»:

ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Օտարերկրյա քաղաքացիները, երկքաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք (նրանց օրինական ներկայացուցիչը), ինչպես նաեւ այն դեպքում, երբ ծնողներից մեկն է Հայաստանի Հանրապետության քաղաքացի, իրենք են ընտրում իրենց երեխայի ուսուցման լեզուն:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ՝ երբ է մերժվում կենսաթոշակ նշանակելը:

Սիրան Մնացականյան (43 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Կենսաթոշակ նշանակելը մերժելու մասին որոշում կայացվում է, եթե՝

անձը չունի կենսաթոշակի իրավունք,

կենսաթոշակի իրավունք ունեցող անձը, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, հաշվառված չէ Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով,

ներկայացված փաստաթղթերը եւ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տվյալները բավարար չեն անձին կենսաթոշակ նշանակելու համար:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կենսաթոշակ նշանակելու համար բնակության վայրի մասին տեղեկանք չի պահանջվում, բավարար են անձնագրում քաղաքացու անձնական տվյալների եւ նրա հաշվառման վայրի մասին նշում պարունակող էջերի պատճենները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հոնկոնգում օրերս ցուցադրվել է հայ կին արվեստագետ Ջոանի ցուցահանդեսը:

Հոնկոնգի «Կենտրոնական վայրի կառավարում» կազմակերպությունը Ջոանից թույլտվություն է ստացել, որպեսզի նրա դիզայնի գաղափարները վերածի ֆիզիկական առարկաների:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մարզ	Ջերմաստիճան
Շիրակ	+8 + 13 +19 + 23
Կոտայքի լեռներ	+8 + 12 +18 + 21
Կոտայքի նախալեռներ	+16+ 18 +25 + 27
Գեղարքունիք	+ 8+ 12 +17 + 20
Լոռի	+11+ 14 +18 + 21
Տավուշ	+14+ 18 +20 + 23
Արագածոտնի լեռներ	+ 8 + 11 +17 + 20
Արագածոտնի նախալեռներ	+16 + 18 +25 + 28

Մարզ	Ջերմաստիճան
Արարատ	+18+ 20 +28 + 30
Արմավիր	+17+ 19 +28 + 30
Վայոց ձորի լեռներ	+10 + 12 +18 + 21
Վայոց ձորի նախալեռներ	+18 + 20 +28 + 30
Սյունիքի հովիտներ	+17+ 21 +23 + 26
Սյունիքի նախալեռներ	+11 + 14 +18 + 21
ԼՂՀ	+12+ 16 +18 + 20
Երեւան	+ 18+ 20 + 30 + 32

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **31.7.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*